«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Հարությունյան

Ուսումնական հաստատություն՝ Գավառ քաղաքի Պապին Ղանդիլյանի անվան համար 2 միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 5

1.1. Ուսուցիչ-ծնող (օրինական ներկայացուցիչ) փոխներգործությունը որպես սովորողների կրթության արդյունավետության բարձրացման միջոց 5

1.2. Ընտանիքում երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը որպես արդյունավետ դաստիարակության և մանկավարժական պայմանների ստեղծման հիմք 7

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ..... 11

2.1. Ծնողական կրթությունը որպես ուսուցչի հետ համագործակցության ձև, ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչները որպես ուսուցչի գործընկեր 11

2.2. Դպրոցի և ուսուցչի կողմից ծնողական կրթության կազմակերպման ձևերը որպես սովորողների կրթության և դաստիարակության ներդաշնակեցման ուղի 14

ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ17

3.1. Սեփական փորձի համատեքստ 17

3.2. Համագործակցության խորացման ուղիները 20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պարտականությունների թվում առանձնացվում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում համագործակցության դրույթը[1]: Դարեր շարունակ երեխաների դաստիարակությունն իրականացվել է ընտանիքում և ուսումնական հաստատություններում: Այս համատեքստում անհնար է չկարևորել ընտանիք-դպրոց կապի կարևորությունը և ուսուցչի համագործակցությունը ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ:

Ընտանեկան դաստիարակության համակարգում կարևոր է դպրոցականների ուսման բարձր արդյունավետությունը: Դպրոցը պետք է հաշվի առնի ընտանիքի կառուցվածքի առանձնահատկությունները: Մեզ մոտ ամենամեծ դերը տրվում է մորը, տատիկին: Ժամանակակից ընտանիքի համար բնորոշ է ծնողների կրթական, հասարակական գործունեությունը: Այս ամենի հետ մեկտեղ ծնողները սկսել են դպրոցից պահանջել ավելին: Սակայն այդ պահանջը պետք է դրսևորվի համագործակցության նկատմամբ բաց լինելով և չկրի միակողմանի բնույթ:

Հաճախ թե՛ դպրոցում, թե՛ ընտանիքում առանորդվում են դաստիարակության ավանդական մոտեցումներով, որում այնքան էլ տեղ չի տրվում ծնողական կրթությանը: Դաստիարակության ավանդական մոտեցումների դեպքում մեծ տեղ է տրվում սուգեստիային՝ ներշնչմանը: Իսկ քանի որ ժամանակը եկավ ապացուցելու, որ ներշնչումը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական և ներազդել դաստիարակվողի ողջ կյանքի վրա, առաջ եկան դաստիարակության նոր՝ ժամանակակից մոտեցումներ, որոնք ապահովեցին դպրոց-ընտանիք կապը՝ առաջ բերելով ծնողական կրթության անհրաժեշտություն: Իհարկե, ժամանակակից դաստիարակության մոտեցումներն առավել մեծ ներդրումներ են պահանջում թե՛ ժամանակի, թե՛ գիտելիքների առումով: Ժամանակակից դաստիարակության մոտեցումների բացառումը հանգեցնում է դեռահասների տրամաբանական մտածողության չզարգանալուն, սուբյեկտիվ բնութագրիչների չձևավորվելուն: Սակայն սա չի նշանակում, որ պետք է բացառել դաստիարակության գործընթացում ավանդական մոտեցումների կիրառումը: Ծնողական կրթության անհրաժեշտությունը

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին», 14 հոկտեմբերի 2010 թվականի N 1391-Ն

պայմանավորված է նաև նրանով, որ ծնող-ուսուցիչ համագործակցության արդյունքում դուրս բերվի այն մոդելը, որում համակցված կլինեն և՛ ավանդական, և՛ ժամանակակից դաստիարակության մոդելները:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել ուսուցչի և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցության ուսումնասիրություն՝ սովորողների կրթության և ընտանեկան դաստիարակության արդյունավետության բարձրացման նպատակով:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- դիտարկել ուսուցիչ-ծնող (օրինական ներկայացուցիչ) փոխներգործությունը որպես սովորողների կրթության արդյունավետության բարձրացման միջոց,
- ուսումնասիրել ընտանիքում երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը որպես արդյունավետ դաստիարակության և մանկավարժական պայմանների ստեղծման հիմք,
- ներկայացնել ծնողական կրթությունը որպես ուսուցչի հետ համագործակցության ձև, դիտարկել ծնողներին կամ նրանց օրինական ներկայացուցիչներին որպես ուսուցչի գործընկեր,
- ուսումնասիրել դպրոցի և ուսուցչի կողմից ծնողական կրթության կազմակերպման ձևերը որպես սովորողների կրթության և դաստիարակության ներդաշնակեցման ուղի,
- սեփական փորձի համատեքստում կատարել ուսուցչի և սովորողների ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) համագործակցության առկա վիճակի գնահատում:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է ուսուցիչ-ծնող (օրինական ներկայացուցիչ) համատեքստում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում այդ համագործակցության ապահոված արդյունքները:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 3 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 24 համակարգչային էջ (ներառյալ տիտղոսաթերթը, բովանդակությունը և գրականության ցանկը):

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Ուսուցիչ-ծնող (օրինական ներկայացուցիչ) փոխներգործությունը որպես սովորողների կրթության արդյունավետության բարձրացման միջոց

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբվստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության ու հանդուրժողականության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել:

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց ու երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Երեխաների, ծնողների, ուսուցիչների միջև համագործակցային հարաբերությունների ձևավորումն ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ գործընթացում ավագների միջև ինչպիսի փոխհարաբերություններ են հաստատվում:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Ծնողների և ուսուցիչների համագործակցությունը ենթադրում է նաև երեխային ներկայացվող միասնական պահանջների, նրա զարգացման ծրագրերի և մեթոդիկաների մշակում:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են[2]:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Ժողովների ժամանակ ուսուցիչների մենախոսությունը պետք է տեղը զիջի ծնողների հետ երկխոսությանը, որի ընթացքում փոխանակվում են գաղափարներ, կարծիքներ, համատեղ որոնվում առկա հիմնախնդիրների լուծումներ: Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ ծնողները պատրաստ ենքննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները: Դասղեկը մշակում է ծնողներին փոխանցվող հոգեբանամանկավարժական գիտելիքների համալիր, որը ենթադրում է ծնողների գործուն, ստեղծագործական մասնակցություն՝ հարցերի քննարկմանը, ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներին: Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը, ուսուցիչների և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) հետ հանդիպումները:

⇒ Դասղեկը ծնողներին ներգրավում է դպրոցի կառավարման և դասարանի գործունեության կազմակերպման հետևյալ տիպի աշխատանքներում.

⇒ Երեխաների դաստիարակությանը վերաբերող դպրոցական կյանքի հիմնախնդիրների քննարկում և լուծում,

[2] Гурьянова Т.А. Трудности взаимодействия молодых учителей с родителями // Вестник Алтайского государственного педагогического университета, 2017. – стр. 38-40

⇒ Ծնողների մասնակցություն դաստիարակչական աշխատանքներին և միջոցառումներին, ուսումնական կաբինետների ձևավորմանը, արտադասարանական աշխատանքների կազմակերպմանը,

⇒ Ծնողների մասնակցություն դպրոցում և դասարանում ինքնակառավարման մարմինների (ծնողական ժողովներ, համաժողովներ, ծնողական կոմիտեներ և այլն) ստեղծմանը, դրանց գործունեության կազմակերպմանը:

Ուսուցիչների, դասղեկների կարևորագույն խնդիրներից են ընտանիքի միասնության ու համախմբվածության նախադրյալների ստեղծումը, ծնողներիև երեխաների փոխըմբռնման մթնոլորտի, ընտանիքում երեխաների համար հարմարավետ միջավայրի նախապատրաստումը, նրանց համատեղ գործունեության և շփման հմտությունների ձևավորումը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական միջոցառումների կազմակերպումը՝ նվիրված ընտանեկան լավագույն ավանդույթների և սովորությունների ներկայացմանը[3]:

Ուսուցիչն իրականացնում է նպատակասլաց գործունեություն երեխաների և նրանց ծնողների միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորման ուղղությամբ, ստեղծում ծնողների նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակման իրավիճակներ: Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալ է: Իսկ ինչպե՞ս արթնացնել ուսուցիչների նախաձեռնողականությունը, դպրոցական կոլեկտիվում ստեղծել մանկավարժական նախագծի իրականացման ուղղությամբ գործունեության դրական դրդապատճառներ: Այս ամենը հնարավոր է դասղեկների կողմից երիտասարդ մանկավարժներին կոնկրետ աջակցություն ցուցաբերելու միջոցով: Սկսնակներին հարկավոր է օգնել դասարանական կամ դպրոցական ծնողական ժողովներում զեկուցումներ կամ ելույթներ նախապատրաստելիս: Այս ուղղությամբ աշխատանքի նախագծման ժամանակ պետք է ամրապնդել դպրոցի և ծնողների փոխհարաբերությունները, ձևավորել արդյունավետ գործող ծնողական խորհուրդ՝ հավասարապես բաժանելով կրթության որակի պատասխանատվությունը:

1.2. Ընտանիքում երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը որպես արդյունավետ

[3] Нуриева А.Р., Миннуллина Р. Ф., Газизова Ф. С. Взаимодействие учителей и родителей в воспитании младших школьников Текст научной статьи по специальности «Науки об образовании», 2019., с.192.

դաստիարակության և մանկավարժական պայմանների ստեղծման հիմք

Կրթական բարեփոխումների հաջողության գրավականն ընտանիքների հետ ուսումնական հաստատությունների համագործակցության ապահովման խնդիրն է: Հայտնի է, որ կրթական համակարգի առաջին օղակը եղել և մնում է ընտանեկան դաստիարակությունը: Ուստի բարեփոխումների իրականացումն անհրաժեշտ է սկսել հենց այստեղից: Այսինքն՝ հարկ է բարձրացնել ընտանեկան դաստիարակության որակը և ծնողն երի մանկավարժական գիտելիքների մակարդակը: Ընտանիքը սոցիալական առաջին ինստիտուտն է, որտեղից սկիզբ է առնում կյանքի շարունակականությունը: Յուրաքանչյուր ոք ընտանիք կազմելուց առաջ իր առջև պետք է դնի հետևյալ հարցադրումները. «Ի՞նչպիսի երեխա կարող եմ դաստիարակել», «Ո՞րն է իմ դերը նրա զարգացման հարցում «, «Ի՞նչ գիտեմ երեխայի ու նրա զարգացման խնդիրների վերաբերյալ» և այլն: Երեխա ունենալու և դաստիարակելու հարցում երիտասարդ ընտանիքներն ունեն հակասական պատկերացումներ: Հատկապես դաստիարակության հարցում բոլոր ժամանակաշրջ աններում եղել են խիստ տարբեր մոտ եցումներ: Կան ծնողներ, ովքեր երեխաների դաստիարակության հարցում առաջնային են համարում իրենց կամքն ու պահանջները և գրեթե ուշադրություն չեն դարձնում երեխայի անհատականությ ան, զգացմունքների ու հույզերի ճիշտ ձևավորման վրա: Կան նաև հակառակ բևեռում գտնվող ծնողներ: Նրանք գտնում են, որ երեխայի դաստիարակությ ան մեթոդները չպետք է խիստ լինեն:

Հարկավոր է երեխային տալ ազատություն, և նա ինքը կընտրի իր գործունեությ ան տեսակը: Եվ կա այս երկու մոտեցումների կենտրոնում գտնվող դաստի արակության մի ոճ, երբ ծնողն աչալուրջ է, տրամաբանության սահմաններում վերահսկում է երեխայի զարգացումն ու գործունեության բոլոր տեսակն երը, բարեկամական հարաբերությունն եր է հաստատում իր ու երեխայի միջև, և իրենց հարաբերություններում բացառվում են սուտը ու շինծու որևէ տարր: Այդ դիրքորոշումն ընտրած ծնողները երեխային տալիս են որոշակի ազատություն, և դա էլ ապահովում է փոխադարձ վստահության մթնոլորտ: Մակարենկոն այս առիթով ասել է, որ ծնողների և երեխաների միջև բարեկամական հարաբերություններ ստղծելը վատ չէ, եթե դա լուրջ է, բայց նաև այդ հարաբերությունն երում պետք է պահել չափի զգացումը: Ծնողական դաստիարակության մեջ կարևորագույն պայմանն այդ «չափի զգացողության» վերահսկումն է՝ տարբեր արարքների ճիշտ տեղն ու ժամանակը որոշելը: Հենց այդ չափ հասկ ացությունն էլ միշտ և առավել ևս այսօր խիստ հարաբերական է. դրա սահմ անները զատորոշվում են ըստ դաստիարակողի իմացական մակարդակի և անձնական մշակույթի: Մեր երկրում սովորաբար 2-3 տարեկանից երեխաների մեծ մասը հաճախում է նախադպրոցական կրթական

հաստատություններ, ստանում համապատասխան կրթություն: Դրանով էլ ապահովվում են երեխայի զարգացման և բազմակողմանի դաստիարակության մի շարք պայմաններ: Այդ ամենն արվում է հատուկ մշակված և գիտականորեն հիմն ավորված մեթոդաբանությամբ և միջոցն երով:

Կան նաև երեխաներ, որոնք չեն հաճախում նախադպրոցական հաստատություններ, և նրանց զարգացման միակ ձևը ընտանեկան դաստիարակությունն է: Իսկ որ դաստիարակությունը պետք է սկսել շատ ավելի վաղ շրջանից, այդ են վկայում գիտնականների կողմից արված բազմաթիվ հետազոտություններ, որոնք ապացուցում են, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել դեռևս նախածննդյան շրջանից: Հաշվի առնելով այս և նմանատիպ շատ ուսումնասիրություններ՝ ծնողները պետք է հստակ գիտակցեն, թե որքան կարևոր է իրենց դերը երեխայի անձի ձևավորման և զարգացման գործում: Ընտանեկան դաստիարակությունը որքան կարևոր, նույնքան էլ չվերահսկվող գործընթաց է: Այդ է պատճառը, որ այս ասպարեզում կարելի է գտնել բազում թերություններ և բացթողումներ: Շատ ծնողն եր չեն գիտակցում, որ հարկավոր էերեխայի դաստիարակությամբ զբաղվել վաղ հասակից և այդ հարցում պետք է լինել չափազանց հետևողական: Այս են վկայում ծնողների կողմից արվող բազմաթիվ արտահայտություններ. «Երեխան թող մի փոքր մեծանա, հետո նոր կզբաղվեմ նրա այս կամ այն թերության շտկմամբ», կամ՝ «Հիմա փոքր է՝ չի հասկանում, թող անի ինչ ուզում է»: Սա միանշանակ սխալ մոտ եցում է: Ծնողները պետք է գիտակցեն, որ դեռևս վաղ տարիքից երեխայի մեջ ի հայտ են գալիս անձնային լավ կամ վատ հատկություններ, որոնք պետք է զարգացնել կամ ժամանակին շտկել և, որ ամենակարևորն է, ճիշտ միջոցներով: Իսկ դաստիարակության միջոցները բազմազան են հատկապես ներկա տեղեկատվական պայմաններում: Դրանց ճիշտ կիրառումը պահանջում է մանկավարժական գիտելիքների իմացություն:

Մանկավարժական գիտելիքների, երեխայի, դաստիարակության, անձի ձևավորման և զարգացման մասին տեղեկատվության պակասը կամ բացակայությունը հանգեցնում են բազմաթիվ խընդիրների, որոնք էլ առաջ են բերում անհ անդուրժողականություն, հակասությունն եր ու վեճեր՝ ծնող-երեխա հարաբերություններում: Ի դեպ, այս երևույթն երը պայմանավորված չեն կոնկրետ տարիքային փուլով: Ցանկացած տարիքում էլ հնարավոր է բախվել այս խնդիրն երին: Սակայն մյուս կողմից այդ խնդիրների առաջացումը չպետք է շփոթ ել սերնդային կոֆլիկտների հետ: Ընտանեկան դաստիարակության խնդիրների կարգավորման դժվարությունն եր հիմնականում ի հայտ են գալիս հետևյալ պատճառներով.

- Ծնողները չեն կարողանում լիարժեք վերլուծել ստեղծված իրավիճակն երը և ընտրել քայլերի ճիշտ հաջորդականությունը:

- Երեխայի դաստիարակությամբ զբաղվում են հիմնականում մայրիկները:
- Երեխայի դաստիարակությունը կրում է աստիճանակարգային/հիերարխիկ բնույթ:
- Երբեմն ծնողների կողմից տարվող դաստիարակչական աշխատանքն երը «արգելափակվում են» տատիկպ ապիկների կողմից:
- Ընտանիքի հայրը հանդես չի գալիս որպես երեխայի դաստիարակություն իրականացնողներից մեկը, այլ սոսկ որպես նրան կերակրող և նյութապես ապահովող սուբյեկտ:

Ընտանեկան դաստիարակություն կազմակերպելիս շեշտը պետք է դնել այն հարցի վրա, թե ինչպես ծնողները հեղինակություն դառնան երեխայի համար: Սա հատկապես կարևոր է նախադպրոցական տարիքի երեխաների միջավայրում: Բոլորս էլ գիտենք, որ երեխայի դաստիարակությամբ ընտանիքում զբաղվում են հիմնականում մայրիկները: Մինչդեռ այսօր ընտանեկան դաստիարակության մակարդակի բարձրացման կարևոր նախադրյալ է հայրիկների դերի իմաստ ավորումն այդ գործընթացում: Ընտանեկան դաստիարակության խնդիրներն առկա են ոչ միայն մեր հասարակությունում, այլև ուսումնասիրվում են ամբողջ աշխարհում: Բոլոր դեպքերում ակնհայտորեն առկա է մի պահանջ. ծնողների մեջ բարձրացնել մանկավարժական գիտելիքների մակարդակը:

Այսօր այդ հարցն ինչ-որ չափով իրենց վրա են վերցնում կրթական հաստատությունները՝ ծնողական կոմիտ եների օգնությամբ: Սակայն արտասահմանյան զարգացած երկրներում վաղուց գործում են ծնողական կրթությ ան կենտրոններ, որոնք ծնողների և ընտանիքի մյուս անդամների մանկավարժական կրթության կազմակերպմ ամբ նպաստում են նրանց ակտիվ ներգրավմանը երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացներում: Նախադպրոցական կրթական հաստ ատություններում կուտակված դաստի արակչական փորձը ցույց է տալիս, որ մանկավարժական խորհրդատվության կարիք ունեն գրեթե բոլոր չափահասները: Հետևաբար չափազանց կարևոր է ծնողական կրթության գործընթացն սկսել կրթական համակարգի առաջին օղակից: Ծնողների մանկավարժական գիտ ելիքների ձեռք բերումը կհանգեցնի ընտանեկան դաստիարակության մակարդակի բարձրացմանը: Ուստի հարկ ավոր է կազմակերպել մանկավարժական սեմինարներ, ստեղծել հասարակական կազմակերպություններ, որոնք կզբաղվեն մանկավարժական խորհրդատվությամբ և ամեն կերպ կաջակցեն երեխաների դաստիարակությամբ զբաղվող բոլոր անձանց:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

2.1. Ծնողական կրթությունը որպես ուսուցչի հետ համագործակցության ձև, ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչները որպես ուսուցչի գործընկեր

Ծնողական կրթության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ծնող-ուսուցիչ համագործակցության արդյունքում դուրս բերվի այն մոդելը, որում համակցված կլինեն և՛ ավանդական, և՛ ժամանակակից դաստիարակության մոդելները, ինչը կբարձրացնի սովորողների ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Ծնողական կրթությունը հետապնդում է կարևորագույն գերնպատակ, այն է ծնողներին մատուցել գիտելիքներ երեխաների բազմակողմանի աճի, զարգացման, տարիքային առանձնահատկությունների, դրանցից բխող արժեհամակարգային, համոզմունքային և գործունեության ձևերի փոփոխությունների մասին: Ծնողական կրթությունը պատրաստում է ծնողներին վերը նշյալ փոփոխություններին ճիշտ արձագանքելուն և համապատասխան վերաբերմունք ձևավորելուն: Ասվածը պայմանավորում է ծնողական կրթության կազմակերպման համապատասխան ձևերի ընտրությունը:

Մանկավարժության հիմնախնդիրների դիտարկման համատեքստում ծնողական կրթության հիմնահարցը ներառվել է ավելի ուշ: Դեռ 20-րդ դարում տարբերակում էին «ընտանեկան դաստիարակություն» և «դպրոցական դաստիարակություն» հասկացությունները: Մասնագիտական ուսումնասիրությունները, որպիսիք կատարել են Ջ.Լոկը, Յա.Ա.Կոմենսկին, Ի.Գ.Պեստալոցցին, Ժ.Ժ.Ռուսսոն և այլք, բովանդակում էին միայն ծնողներին վերաբերող դաստիարակչական դրույթներ: Հեղինակների մեկ այլ խումբ, Կ.Դ.Ուշինսկին, Ն.Ի.Պիրոգովը ուսումնասիրում էին դաստիարակությունը ուսումնական հաստատության ներսում: Եվ միայն Պ.Ֆ.Լեսթգաֆտն էր, ով վեր հանեց ծնողներին մանկավարժական գիտելիքներով զինելու հիմնահարցը որպես մանկավարժական գործունեության կարևորագույն ուղղություն: Եւ միայն 1917թ-ի հեղափոխությունից հետո ծնողական կրթությունը՝ որպես ծնողների մանկավարժական գրագիտություն սովորեցնելու միջոց լայն տարածում գտավ

մասնագիտական գրականության մեջ[4]: Հիմք ընդունելով անձնական փորձը, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները, պետք է նշենք, որ ծնողների, հաճախ նաև մանկավարժական անձնակազմի համար բավականին բարդ է դպրոց-ընտանիք կապի ստեղծումը, քանի որ ընտանիքում և դպրոցում կիրառվում են դաստիարակչական տարբեր մոդելներ, Սակայն տարիների փորձը և ծնողների մոտ մանկավարժական հմտությունների, մշակույթի ձևավորումը, ծնողական կրթության ավանդական մոդելների ներդրումը պայմանավորեցին ներկայումս առավել զարգացած՝ ոչ ավանդական ձևերի կիրառումը:

Եթե նախկինում ծնողական կրթությունը միտված էր ընտանեկան և դպրոցական դաստիարակության ներդաշնակեցմանը, ապա ներկայումս այն միտված է ուսումնական գործընթացին ծնողների առավել ակտիվ ներգրավվածության ապահովմանը: Մասնավորապես, այն ծնողներն, ովքեր չունեն բարձրագույն կրթություն, հաճախ կարիք են ունենում կողմնակի աջակցության, որպեսզի ընկալեն և ընդունեն իրենց երեխայի անձնային զարգացումը, տարիքային առանձնահատկությունները և պատկերացում կազմեն կրթական գործընթացի, դրա իրավական կարգավորման մասին: Բնականաբար, բարձրագույն կրթության առկայությունը չի վկայում ծնողի՝ առավել գիտուն լինելու մասին: Սակայն այն փաստը, որ բարձրագույն ուսումնական հաստատություն հաճախած անձն ունի հաղորդակցման, ընկալման այլ մշակույթ, միանշանակ է: Ծնողական կրթության դիտարկման դեպքում մասնագետներն ընդգծում են այն փաստը, որ մեծ է ծնողների դերը, հեղինակությունը երեխայի ներկայի և ապագայի կառուցման հարցում, հետևաբար ծնողը պետք է մանկավարժական տեսանկյունից լինի գրագետ[5]:

Դպրոցի և ծնողների փոխգործակցության կարևորագույն ուղղությունը մանկավարժական անձնակազմի աշխատանքն է ծնողների հոգեբանամանկավարժական կրթության կազմակերպման ուղղությամբ: Մեծ է մանկավարժական անձնակազմի դերը դրական ծնողավարման ապահովման հարցում: Մանկավարժական անձնակազմի կողմից ծնողական կրթության կազմակերպման արդյունավետ ձևերի ընտրության արդյունքում ապահովվում է պատասխանատու և գիտակցված ծնողավարում: Ներկայիս հարափոփոխ պայմաններում ծնողները հաճախ չեն տիրապետում ուսումնական և այլ ծրագրերում իրենց երեխաներին աջակցելու, հասակակիցների հետ հաղորդակցման պատրաստելու հմտությունների, կրթության ոլորտում իրավական գիտելիքների: Այս համատեքստում կարելի է առանձնացնել

[4] Журба Н.Н. Историко-педагогический обзор проблемы взаимодействия семьи и школы // Научно-теоретический журнал «Научное обеспечение системы повышения квалификации кадров». – 2010. – №3 (5). – стр. 92–96

[5] Гошин М.Е., Мерцалова Т.А. Типы родительского участия в образовании, социально-экономический статус семьи и результаты обучения // Вопросы образования. 2018. № 3 68-90

ծնողական կրթության 3 ուղղություն ըստ սուբյեկտային կազմի (ըստ անձի առանձնացման, ում ուղղված է ծնողական կրթությունը, այսինքն ծնողի): Առաջին ուղղության դեպքում ծնողական կրթությունը միտված է ծնողի՝ որպես դաստիարակողի կրթությանը. կենտրոնացում երեխայի տարիքային առանձնահատկություններին, նրա արժեքային համակարգին և այլն: Երկրորդ դեպքում ծնողական կրթությունը միտված է ծնողի՝ որպես ուսուցանողի կրթությանը. կենտրոնացում ուսումնական և այլ ծրագրերում իրենց երեխաներին աջակցելու հմտություններին: Երրորդ դեպքում ծնողական կրթությունն ուղղված է ծնողի՝ որպես համագործակցի, գործընկերոջ կրթությանը. կենտրոնացում կրթության իրավական կարգավորման գործում ծնողների գիտելիքների բարձրացմանը[6]:

Ծնողները իրենց երեխաների դաստիարակության և կրթելու գործում դառնում են ուսուցչի գործնկերները: Ծնողներն ու դպրոցը միասին են պատասխանատու զարգացման բոլոր ոլորտներում: Կրթության հարցում ծնողների ակտիվ մասնակցությունը ապահովելու համար կարելի է թույլ տալ, որ ծնողները դասավանդեն՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները: Իրենց ծնողներին տեսնելով դպրոցի կյանքում ներգրավված և համագործակցելիս՝ երեխաներն իրենց ավելի կարևոր մարդ են զգում: Ընտանքի և դպրոցի լավ, բարեկամական հարաբերություններից շահում են բոլոր երեխաները:

Հիմք ընդունելով ծնողական կրթության կազմակերպման երեք ուղղությունները՝ մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են ծնողական կրթության կազմակերպման ձևերի ավանդական և ոչ ավանդական ենթախմբերը, որոնք իրենց հերթին լինում են կոլեկտիվ, անհատական, դիտողական-տեղեկատվական[7]: Այս բոլոր ձևերի արդյունավետ կազմակերպման պատճառը ծնողի հեղինակությունն է սովորողի մոտ: Ծնողի ուղղորդմամբ ապագան կերտելու և նրա կարծիքին առաջնային նշանակություն տալու հանգամանքներով է պայմանավորված ծնողների նախապատրաստումը (հետագայում շարունակական կրթությունը) երեխաների ուսուցմանը և դաստիարակմանը:

Ավանդական են համարվում ծնողական կրթության կազմակերպման այն ձևերը, որոնք ընդհանուր են բոլոր ուսումնական հաստատությունների համար և կիրառվում են տարիներ շարունակ: Դրանց թվին են դասվում ծնողական ժողովները,

[6] Гошин М.Е., Мерцалова Т.А. Типы родительского участия в образовании, социально-экономический статус семьи и результаты обучения // Вопросы образования. 2018. № 3., стр. 68-90:

[7] Катович, Н. К. Формы и методы взаимодействия семьи и школы: пособие для педагогов учреждений общ. сред. образования / Н. К. Катович, Т. П. Елисеева. – Минск : Национальный институт образования, 2011., стр.20-22

մանկավարժական զրույցները ծնողների հետ, համատեղ միջոցառումների կազմակերպումը, անհատական և խմբային խորհրդատվությունները և այլն[8]:

Ծնողական կրթության կազմակերպման ոչ ավանդական ձևերը օգնում եմ ուսուցչիներին ծնողների հետ համատեղ աշխատանքի միջոցով հասնել սովորողների առավել արդյունավետ դաստիարակությանը և ուսումնական արդյունքների բարձրացմանը: Ոչ ավանդական ձևերի առաջացումը պայմանավորված է նրանով, որ ներկայումս ծնողների զգալի մասը ունեն բարձրագույն կրթություն, կրթական որոշակի մակարդակ և ուսումնական, դաստիարակչական գործընթացում առաջացող խնդիրներին այլ դիտանկյունից են նայում, ինչն էլ պայմանավորել է նոր, ոչ ավանդական ձևերի ներդրում: Ոչ ավանդական ձևերի թվին են դասվում քննարկումները, սեմինարները, «կլոր սեղանները», թրեյնինգները և այլն[9]:

2.2. Դպրոցի և ուսուցչի կողմից ծնողական կրթության կազմակերպման ձևերը որպես սովորողների կրթության և դաստիարակության ներդաշնակեցման ուղի

Ծնողական ժողովներ. Ծնողական ժողովը հանրակրթական ուսումնական հաստատություններում եղել և մնում է մանկավարժների՝ ծնողների հետ աշխատելու և համագործակցելու ամենատարածված ձևը: Առաջին հայացքից թվում է, թե նոր ժամանակները համագործակցության նոր եզրեր և եղանակներ պետք է առաջարկեն: Ամենևին էլ այդպես չէ: Ծնողական ժողովներն իրենց ավանդական և ոչ ավանդական ձևերով հանդիսանում են այդ համագործակցութան անբաժանելի մասը և մանկավարժի՝ ծնողի հետ աշխատելու առավել արդյունավետ ձևը՝ հատկապես երեխայի դաստիարակության ու զարգացման նախնական փուլում[10]:

Ծնողական ժողովների ժամանակ փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Ժողովների ժամանակ ուսուցիչների մենախոսությունը պետք է տեղը զիջի ծնողների հետ երկխոսությանը, որի ընթացքում փոխանակվում են գաղափարներ, կարծիքներ, համատեղ որոնվում առկա հիմնախնդիրների լուծումներ: Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ ծնողները պատրաստ են քննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները: Դասղեկը մշակում է ծնողներին փոխանցվող հոգեբանամանկավարժական գիտելիքների համալիր, որը ենթադրում է ծնողների

[8] Цацыбин, СТР. А. Взаимодействие школы и семьи / СТР. А. Цацыбин. – Волгоград : Учитель, 2004., стр. 19

[9] Взаимодействие семьи и школы: теория и практика [Электронный ресурс] : электрон. сб. материалов Междунар. науч.-практ. семинара, Брест, 28 апр. 2021 г. / Брест. обл. ин-т развития образования ; редкол.: Г. В. Лагонда, Е. И. Медведская ; под общ. ред. И. Г. Матыциной. – Брест : БрГУ, 2021., стр.33

[10] Дереклеева Н.И. Новые родительские собрания. 1-4 классы. - М.: издательство Вако, 2008, стр.336

գործուն, ստեղծագործական մասնակցություն՝ հարցերի քննարկմանը, ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներին: Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը, ուսուցիչների և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) հետ հանդիպումները:

Դպրոցական համաժողովներ. Կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են բոլոր դասարաններում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսի հարցերը քննարկվում են դպրոցական համաժողովների ժամանակ: Դպրոցական համաժողովները այդօրինակ հարցերի շուրջ ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դպրոցական կոլեկտիվի հիմնախնդիրները:

Զրույց, հարցազրույց և անկետավորում. Զրույցը և հարցազրույցը բանավոր հարցումներ են, որոնք ուղղվում են մարդկանց այս կամ այն թեմայի վերաբերյալ, իսկ անկետավորումը գրավոր հարցում է: Հարցման ենթարկվածներին անվանում են հարցվածներ և պատասխանողներ: Հարցազրուցի և անկետավորման ժամանակ շատ կարևոր նշանակություն ունի հարցերի ձևակերպումը: Դրանք կարող են լինել բաց, փակ, կիսափակ[11]:

Ուսուցիչների այցելությունը ծնողներին. Այսօրինակ այցելությունը սովորաբար կրում է «փրկարարական» բնույթ, քանի որ ուսուցիչն այցելում է աշակերտի ծնողներին այն դեպքում, երբ արդեն առկա են և արմատավորվել են բավականաչափ խնդիրներ:

Ներկայացնենք ծնողական կրթության կազմակերպման ոչ ավանդական ձևերից մի քանիսը:

Խորհրդատվություն. Ծնողների խորհրդատվությունն այսօր ծնողական կրթության ամենաարդիական և պահանջված ուղղությունն է: Ծնողների մեծամասնությունը ինքնակրթության համար ժամանակ չի ունենում: Սովորաբար խորհրդատվության համար դիմում են դպրոցին: Որպես կանոն, դա լինում է հատկապես ծայրահեղ իրավիճակներում՝ երեխայի վատ առաջադիմության կամ վարքի դրսևորման ժամանակ: Խորհրդակցության հիմնական նպատակը ծնողների կողմից երեխայի հիմնախնդիրների, նրա անձի մասին ամբողջությամբ ավելի խոր և օբյեկտիվ պատկերացում ունենալն է, սեփական դաստիարակչական ուղեծրի ու կրթական գործընթացի մյուս մասնակիցների հետ շփման միջոցների որոշումը:

[11] Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ. Սոցիալական մանկավարժություն (բուհական ձեռնարկ)/ Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 57-58

Կլոր սեղան. Ծնողական կրթության այս ձևը ունի մեկ գերակա նպատակ. մասնագետների ներգրավմամբ քննարկել ծնողների մտահոգող դաստիարակության հետ կապված խնդիրները: Այս միջոցառման ժամանակ ծնողները գրավոր կամ բանավոր հերթագրվում են այս կամ այն թեմայով մասնագետների հետ քննարկումներ ունենալու համար[12]:

Ծնողական ընթերցում. Վերջինս շատ կարևոր և ծնողական կրթության արդի ձև է: Այն թույլ է տալիս ծնողներին ոչ միայն լսել, այլև կարդալ որևէ գրական ստեղծագործություն, հոգեբանական-մանկավարժական տեքստ, դուրս բերել դրա գերակա խնդիրը/խնդիրները և անցկացնել քննարկումներ: Նպատակն է ծնողների այնպիսի հմտությունների ձևավորումը, որոնց միջոցով նրանք կկարողանան նկատել սեփական երեխաների խնդիրները: Այս համատեքստում կարևոր ենք համարում անդրադառնալ այն փաստին, որ դեռևս Մակարենկոն, Սպոկը և Ֆորմը գրքեր են հրատարակել բարձրացնելու ծնողների հոգեբանամանկավարժական իրազեկվածությունը:

Ծնողական երեկոներ. Ծնողական կրթության, հաղորդակցման բավականին հաճելի, ժամանցային ձև է, որը կազմակերպվում է ծնողների կողմից՝ նրանց նախաձեռնությամբ և երեխաների մասնակցությամբ: Ծնողների համար հնարավորություն է ստեղծվում կատարել փորձի փոխանակում մյուս ծնողների կողմից կիրառվող դաստիարակչական մեթոդների շուրջ:

Թրեյնինգներ. Մասնավորապես կիրառելի են հոգեբանական թրեյնինգներ: Հոգեբանական թրեյնինգների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում անձնային աճի թրեյնինգները, որտեղ ընդհանուր հոգեբանական թրեյնինգի առանձնահատկություններից զատ թրեյնինգը միտված է երեխայի դաստիարակման հետ կապված ներքին վախերի և անհատական կոմպլեքսների հաղթահարմանը: Մասնակիցները հաղթահարում են իրենց հոգեբանական տագնապայնությունը և ապրումները, որոնք խանգարում են երեխայի դաստիարակման և ուսուցման գործընթացն արդյունավետ կազմակերպելուն և հասնում են իրենց առջև դրված նպատակներին:

Վերը նշված ծնողական կրթության ձևերը իրականացվում են ծնողական կրթություն իրականացնող կազմակերպություններում և հարթակներում: Ծնողական կրթության կազմակերպություններ են համարվում համայնքները, դպրոցները, համալսարանները (որոշ երկրներում համալսարանները սերտ համագործակցում են դպրոցների հետ և կազմակերպվում են ծնողական կրթություն տարբեր ձևերով), հոգեբանական կենտրոնները և այլն:

---

[12] Катович Н.К. Взаимодействие семьи и школы: актуальные стратегии и формы: https://adu.by/images/2021/01/Katovich-vzaimod-semii-shkoly.pdf

Ծնողական կրթության կազմակերպման հարթակներից են համացանցը, առցանց կրթության տարբեր տեխնոլոգիական լուծումները, կայք-էջերը; Ի տարբերություն համացանցի, որտեղ ծնողը կարող է գտնել տարբեր որակյալ-անորակ տեղեկատվություն, առցանց կրթության տարբեր տեխնոլոգիական լուծումները, կայք-էջերը արդեն իսկ պատրաստի վիճակում ներկայացնում են զտված և դրական ծնողավարման ապահովմանը նպաստող կրթական նյութեր:

ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ (ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. Սեփական փորձի համատեքստ

Սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ համագործակցությունը հիմնականում կրում է ներդպրոցական բնույթ: Ծնողների հետ զրույցները, ընդհանուրին հետաքրքրող քննարկումները հիմնականում իրականացվում են ծնողական ժողովների ընթացքում: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են անհատական հանդիպումներ՝ առօրյա խնդիրների լուծման նպատակով:

Ծնողական ժողովների ընթացքում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կրթության որակը սերտորեն կախված է ընտանեկան դաստիարակությունից և ընտանեկան միջավայրից, անցկացնում եմ տարատեսակ հարցումներ, քննարկումներ, որոնց թվում ընդգրկում եմ հետևյալ հարցերը.

- *Դաստիարակության ո՞ր ոճն են նախընտրում:*

1.Այն ծնողները, որոնք հակված են *ավտորիտար* դաստիարակչական մեթոդին, սովորաբար ջղային են, դժգոհ, իշխող, կոպիտ, սահմանափակ են արտահայտում իրենց հույզերը: Նման ծնողի համար երեխային գրկելը, համբուրելը, գովասանքի խոսքեր ասելը լրացուցիչ ճոխություն է և անընդունելի: Նման հարաբերություններում ծնողը միտ ճիշտ է, իսկ երեխան միշտ պետք է ենթարկվող լինի: Այսպիսի դաստիարակչական մեթոդներ կիրառող ծնողների երեխաները սովորաբար լինում են ըմբոստ, վախկոտ, ջղային, դժբախտ և հեշտությամբ են հասակակիցների ազդեցության տակ ընկնում: Նման դաստիարակության արդյունքում տուժում են երեխա-ծնող հարաբերությունները, անխուսափելի են վեճերը:

2.Դաստիարակչական երկրորդ ոճը *հանդուրժողականն է*: Նման ծնողները ջերմ են և հուզական, բայց շատ սահմանափակ հսկողությամբ, քիչ են մասնակցում երեխայի կյանքին և հեշտությամբ տեղի տալիս երեխայի քմահաճույքներին: Այս ծնողը

առավել շահագրգռված է, որ երեխայի հետ չհակադրվի և չվիճաբանի: Նման ընտանիքներում մեծացող երեխաները լինում են անհանգիստ, կարծում են, թե ծնողները չեն մտածում իրենց մասին, թելադրում են ծնողներին իրենց կամքը և թերահավատությամբ են վերաբերվում նրանց: «Ժամանակակից» ընտանիքներում այսօր շատ հաճախ ենք հանդիպում այս երևույթին, երբ մայրը, կամ հայրը գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային: Իհարկե, նման դեպքերում օգնության են գալիս դայակը, տատիկները կամ որևէ կրթական համալիր, բայց արդյունքում երեխան մնում է անտեսված, ունենում է ինքնավստահության պակաս, իսկ երբեմն էլ ցուցաբերում է հակասոցիալական վարք:

3.Երրորդ ոճը *ավտորիտատիվն* է: Նման ծնողները լինում են ջերմ, հանգիստ, չափավոր են հսկողության մեջ, քաջալերում են երեխային, հաճախ զրուցում են նրա հետ և կողմնակից են երեխայի անկախությանը: Այս ծնողները հակված են դրական ծնող-երեխա հարաբերություններ ստեղծելուն, նրանց հարաբերություններում իշխում է փոխադարձ հարգանքը: Այսպիսի ընտանիքներում մեծացած երեխաները լինում են ինքնավստահ, ի վիճակի են պատասխանատվություն կրել, անկախ են, անկեղծ:

- Արդյո՞ք առօրյայում հաջողվում է ժամանակ տրամադրել երեխայի հետ ժամանցին:

Ցավոք, հաճախ ծնողները, առօրյա հոգսերով տարված, չեն կարողանում ժամանակ հատկացնել երեխայի հետ ժամանցին: Որոշ ծնողներ, իրավամբ, էական ժամանակամիջոց են հատկացնում երեխաների դասապատրաստմանը և բավականին ուշադիր են այդ հարցում, սակայն ժամանցի առումով թերանում են:

- Օգնում են արդյո՞ք իրենց երեխաներին ուսման հարցում:

Ծնողների մեծ մասը մտահոգված է երեխայի ուսմամբ և մշտապես օգնում է նրան, որոշ ծնողներ, սակայն, աշխատանքի բերումով կամ առօրյա տնային հոգսերով պայմանավորված չեն կարողանում անհրաժեշտ օգնություն ցուցաբերել երեխային:

- Արդյո՞ք հետաքրքրված են ուսման արդյունքներով:

Մեծ մասը հետաքրքրված է և հաճախակի կապի մեջ դասվարի հետ:

- Արդյո՞ք գոհ են դպրոց-ուսուցիչ համագործակցությունից:

Մեծ մասը դրական է գնահատում համագործակցությունը և դասվարի անընդհատ կապի մեջ լինելը ծնողների հետ:

Սակայն միայն ծնողների հետ զրույցներով սահմանափակվել հնարավոր չէ: Նախ լրջագույն խնդիր է այն, որ հաճախ հայրերը ներգրավված չեն գործընթացներում: Իսկ առանց նրանց ներգրավվածության մենք՝ ուսուցիչներս չենք կարող օբյեկտիվ գնահատականներ տալ երեխայի խնդիրներին կամ նրա կրթության որակի վրա ազդող գործոններին: Որպեսզի հնարավոր լինի պատկերացում կազմել ընտանեկան դաստիարակության մոտեցումների և ընտանեկան միջավայրի մասին, մենք՝

ուսուցիչներս հաճախ զրուցում ենք նաև երեխաների հետ: Բացի զրույցը անցկացնում ենք նաև «Ընտանեկան սոցիոգրամի» մեթոդով դիտարկումներ:

Թեստի նպատակն է բացահայտել ընտանեկան հարաբերությունների բնույթը, հետազոտվողի դիրքն ընտանիքում: Մեթոդիկան թույլ է տալիս որոշ չափով բացահայտել ընտանիքի անդամների սոցիոմետրական դիրքերը և նրանց հաղորդակցության բնույթը, ընդ որում, սոցիոմետրական մեթոդիկան չկիրառելու դեպքում դրանք մնում են չգիտակցված: Այս մեթոդը բավականին արդյունավետ է և էապես օգտակար հոգեթերապևտներին: Ուսումնասիրվողին տալիս են ձևաթղթեր, որոնցից յուրաքանչյուրի վրա գծված է 110 մմ տրամագծով շրջանագիծ: Հարցվողին հրահանգ է տրվում այդ շրջանագծի ներսում, տարբեր տրամագծի շրջանակների տեսքով տեղադրել ինչպես սեփական անձը, այնպես էլ ընտանիքի մնացած անդամներին: Հրահանգվում է, որ յուրաքանչյուր հարցվող այդ աշխատանքը պետք է կատարի ինքնուրույն՝ առանց այլ անձանց հետ խորհրդակցելու: Ուսումնասիրվողի վերաբերյալ տեղեկությունները պարզվում են ուսումնասիրողի կողմից հետևյալ հարցադրումների կատարման միջոցով՝

1) Ընտանիքի քանի՞ անդամ է ներկայացված շրջանագծի ներսում,

2) Ինչպիսի՞ն են ընտանիքի անդամներին ցույց տվող շրջանակների մեծությունները,

3) Ինչպիսին է այդ շրջանակների փոխադարձ դասավորությունը,

4) Ինչպիսին է այդ շրջանակների փոխադարձ հեռավորությունը:

Արդյունքների ամփոփման հիմքում դրվում են շրջանակների թիվը, շրջանակների մեծությունը, շրջանակների դասավորությունը, շրջանակների հեռավորությունը:

Վերջին դիտարկումների արդյունքները ներկայացնում եմ ստորև: Ուսումնասիրելով շրջանակների թիվը՝ տեսնում ենք, որ հետազոտվող կրտսեր դպրոցականներից և ոչ մեկ սոցիոգրամից դուրս չի թողել իր ընտանիքի անդամներից որևէ մեկին: Սրանից հետևում է, որ եթե անգամ ընտանիքում առկա են բախումնային հարաբերություններ, այնուամենայնիվ ընտանիքի անդամների միջև մերժվածություն առկա չէ:

Շրջանակների մեծության ուսումնասիրությունից ելնելով՝ փաստում ենք, որ հետազոտվող կրտսեր դպրոցականների մեծամասնությունը ընտանիքում առավել նշանակալի համարում են իրենց մայրիկին, ապա հայրիկին և ընտանիքի մյուս անդամներին: Սա վկայում է այն մասին, որ հայրերը այդքան էլ ներգրավված չեն ընտանեկան դաստիարակության գործընթացում:

Հարաբերությունների մասին տեղեկություն ստանալու համար ուսումնասիրեցինք նաև շրջանակների դասավորությունը: Դեպքերի

մեծամասնությամբ ընտանիքի անդամների մոտ առկա է հուզական և սիմբիոտիկ կապ: Հատկանշական է ծնողներից մոր հետ տղաների և հոր հետ աղջիկների հուզական ամուր կապի առկայությունը: Դեպքերից երեքում ընտանիքի անդամները պատկերված են միմյանցից որոշակի հեռավորության վրա: Սա խոսում է որոշակի բախումնային հարաբերությունների մասին, որը կարող է ունենալ տարբեր պատճառներ: Այս թեստի, զրույցի արդյունքները թույլ են տալիս համեմատական ուսումնասիրություն կատարել ծնողական ժողովների, անհատական հանդիպումների ժամանակ զրույցների արդյունքների հետ և դուրս բերել խնդրահարույց իրավիճակներ՝ դրանց շուրջ աշխատանքի արդյունքում էլ ավելի խորացնելով ուսուցիչ-ծնող համագործակցությունը:

3.2. Համագործակցության խորացման ուղիները

Դպրոցի և ընտանիքի համագործակցության ու փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս, երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է: Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքին ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը:

Ծնողների խորհրդատվության կազմակերպումը դպրոցում ունի իր առանձնահատկությունները: Մի կողմից այն խիստ անհատական է, մյուս կողմից էլ անհրաժեշտ է հետևել ծնողների և երեխաների դժվարություններին, որպեսզի մանկավարժական շտկողական գործունեությունը չլինի ժամանակավրեպ: Այսպիսի խնդիրների լուծման լավագույն տարբերակը դպրոցական հոգեբանի հաստիքի ստեղծումն է: Իսկ դպրոցի վարչանու խնդիրը կլինի նմանատիպ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի մշակումը և համակարգային վերլուծությունը: Ծնողների խորհրդատվությունը կարելի է կազմակերպել երկու տեսանկյունից՝ մեթոդական և հոգեբանական:Երկու դեպքում էլ անհրաժեշտ է պահպանել փոխվստահության, փոխադարձ հարգանքի, խորհրդատվության նկատմամբ հետաքրքրությունների, կոմպե-տենտության, ծնողների միջավայրում խնդիրներն ինքնուրույն լուծելու դիրքորոշումների մշակման, խորհրդատվությունների որակի ապահովման սկզբունքները:

Գաղտնիք չէ, որ երեխաների ծնողները զբաղված մարդիկ են: Ուստի խիստ կարևոր է, որ խորհրդատվությունը կազմակերպվի նաև ծնողներին հարմար ժամերի, որպեսզի հնարավորություն ունենան միաժամանակ այլ խնդիրներ լուծել: Դպրոցում պետք է լինի հանդուրժողականության և հյուրընկալ ջերմ մթնոլորտ, քանի որ դպրոցի

ու ծնողի համագործակցությունն սկսվում է դպրոցի նախասրահից: Յուրաքանչյուր դպրոցում, անշուշտ, կան հատուկ ուշադրության կարիք ունեցող, անապահով կամ սովորական, բայց դժվարություններ ունեցող աշակերտներ: Նման պարագայում խնդիրը բավականաչափ թեթևանում է, եթե դպրոցում սոցիալական մանկավարժ է աշխատում[13]:

Պետք է ներդնել սեմինարների պրակտիկան: Ծնողների համար կազմակերպվող սեմինարները ենթադրում են քննարկումներ և գործընթացների ցուցադրումներ: Սեմինարներին մանկավարժները ևս լրացնում են իրենց գիտելիքները, բազմապատկում փորձը: Սեմինարների ավարտին խիստ կարևորվում է հետադարձ կշռադատող հայացքով քննարկման անցկացումը:

Սեմինարների քննարկան թեմաներ կարող են դառնալ աշակերտների հարմարվելը կրթական գործունեության պայմաններին, երեխաների զարգացման տեմպերը և այդ ոլորտում հիմնախնդիրների ու խոչընդոտների բացահայտումը, դպրոցի, դասարանի նկատմամբ երեխայի վերաբերմունքը, երեխաների ինքնուրույնության զարգացումը, կրթական գործընթացում ուսուցման գործուն միջավայրի ձևավորումը, փոխօգնության և հոգեբանական բարենպաստ մթնոլորտի ստեղծումը և այլն:

Ծնողների համար կազմակերպվող այդպիսի սեմինարների պրակտիկան ցույց է տալիս դրանց արդյունավետությունը: Այսպիսով, մանկավարժները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձ: Ընտանիքում է ձևավորվում և մշակվում մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են[14]:

Ընդհանրացնելով փաստենք, որ դժվարին և կարևոր պատասխանատվություն է կրում ուսուցիչը: Նա իր ժողովրդի այն զինվորն է, որի զենքը գիտությունն է: Նա տիրապետում է մարդ դաստիարակելու արվեստին: Իր գործին նվիրված ուսուցչի ամբողջ կյանքն անցնում է սերունդներին կրթելու և դաստիարակելու նորանոր ուղիների որոնման մեջ: Իսկ այդ ուղիները անհիմն և սխալ կլինեն, եթե հենքում չունենան ծնողների հետ համագործակցության արդյունքները:

---

[13] Джексон Н. Классный учитель: как работать с трудными учениками, сложными родителями и получать удовольствие от профессии: учебное пособие. – М.: Альпина Паблишер, 2016. – 286 с.

[14] Прокопьева Ю.П., Неустроева Е.Н. Совместная работа семьи и школы в воспитании ребенка. // Концепт, 2017. – Т 26. – стр. 255-256

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեր կողմից կատարված տեսամեթոդական ուսումնասիրությունները և գործնական աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ ուսուցիչը շատ կարևոր դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողների ծնողների հետ բարենպաստ հարաբերություններ հաստատելու առումով: Ընտանիքի և դպրոցի փոխգործունեության ձևերը հնարավորություն են տալիս կողմերին առողջ բանակցային հարաբերություններ ստեղծել՝ ունենալով ընդհանուր նպատակներ ու մղումներ: Ուսուցիչի համագործակցությունը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ կարող է լուծել կրթական մի շարք հիմնախնդիրներ:

Աղբյուրների ուսումնասիրությամբ պարզեցինք, որ ծնողական կրթությունը, անկախ կազմակերպման ձևից, միտված է ակտիվ կրթական փոխգործակցության ապահովմանն՝ ուղղված սովորողների ներդաշնակ զարգացմանը:

Ծնողական արդյունավետ և գրագետ կրթությունն ուղղված է սովորողի անձնային աճի, զարգացման, դաստիարակության հիմնախնդիրների կարգավորմանը: Ցանկացած պարագայում ուսուցիչը, դպրոցի ադմինիստրատիվ անձնակազմը պետք է նկատի առնեն, որ ծնողական կրթությունը պետք է ապահովի վստահության վրա հիմնված հարաբերություններ երեխաների, ծնողների և դպրոցի միջև՝ միավորելով նրանց մեկ ընդհանուր կոլեկտիվում: Ծնողական կրթությունը գործընթաց է, որն իրականացվում է ուսումնառության ողջ ընթացքում: Ծնողական կրթությամբ ապահովվում է ընտանեկան դաստիարակության շարունակականությունը: Դպրոցը չի կարող փոխարինել ընտանիքին, սակայն կարող է բարձրացնել նրա դերը դաստիարակության հարցում: Ծնող-դպրոց համագործակցության կենտրոնում երեխան է, որն իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է դպրոցում և ընտանիքում: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ինչը աշակերտի կրթության վճռորոշ գործոն է, ապա հաղթանակն ապահովված է: Երեխայի զարգացման վրա ամենաշատը ներգործում է ընտանիքը: Աշակերտի հաջողությունը

դպրոցի և ընտանիքի ընդհանուր նպատակն է: Ասվածն էլ վերաճում է որպես ծնողական կրթության գերնպատակ:

Հիմք ընդունելով աշխատանքում կատարված ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք՝

- Քիչ չեն դեպքերը, երբ ուսուցիչների դերը, նրանց հետ համագործակցության կարևորությունը կրթության որակի բարձրացման հարցում թերագնահատվում է: Կարծում ենք, որ պատկան մարմինների կողմից պետք է կազմակերպվեն սեմինարներ, ներգրավելով հնարավորինս շատ ծնողների, հատկապես տարրական դասարաններում սովորող երեխաներ ունեցող, որպեսզի նրանց մոտ արմատավորվի դասվարների հանդեպ վստահության զգացողություն: Վստահության զգացումը թույլ կտա ծնողներին դասվարներին վստահել ընտանեկան դաստիարակության և միջավայրի այն խնդիրները, որոնք լուծելով դասվարը կկարողանա սովորողին հասցնել բարձր առաջադիմության:

- Գաղտնիք չէ, որ կրթության և դաստիարակության հարցերում մեծ է թե՛ մայր-ծնողի, թե՛ հայր-ծնողի դերը, սակայն հայ իրականության մեջ հայր-ծնողը կա՛մ չի ստանձնում այդ պարտավորվածությունը, կա՛մ նրան «թույլ չեն տալիս ստանձնել, քանի որ դա կանացի զբաղմունք է»: Դասվարները, և ոչ միայն, կարծում ենք, որ պետք է որոշակի ինտերվալով հանդիպումներ կազմակերպեն հայր-ծնողների հետ և մեկնաբանեն նրանց իրենց դերը երեխայի կրթության որակի բարձրացման և դաստիարակության ապահովման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին», 14 հոկտեմբերի 2010 թվականի N 1391-Ն
2. Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ. Սոցիալական մանկավարժություն (բուհական ձեռնարկ)/ Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 57-58
3. Взаимодействие семьи и школы: теория и практика [Электронный ресурс] : электрон. сб. материалов Междунар. науч.-практ. семинара, Брест, 28 апр. 2021 г. / Брест. обл. ин-т развития образования ; редкол.: Г. В. Лагонда, Е. И. Медведская ; под общ. ред. И. Г. Матыциной. – Брест : БрГУ, 2021., стр.33
4. Гошин М.Е., Мерцалова Т.А. Типы родительского участия в образовании, социально-экономический статус семьи и результаты обучения // Вопросы образования. 2018. № 3., стр. 68-90
5. Гурьянова Т.А. Трудности взаимодействия молодых учителей с родителями // Вестник Алтайского государственного педагогического университета, 2017. – стр. 38-40
6. Дереклеева Н.И. Новые родительские собрания. 1-4 классы. - М.: издательство Вако, 2008, стр.336
7. Джексон Н. Классный учитель: как работать с трудными учениками, сложными родителями и получать удовольствие от профессии: учебное пособие. – М.: Альпина Паблишер, 2016. – 286 с.
8. Журба Н.Н. Историко-педагогический обзор проблемы взаимодействия семьи и школы // Научно-теоретический журнал «Научное обеспечение системы повышения квалификации кадров». – 2010. – №3 (5). – стр. 92–96
9. Катович Н.К. Взаимодействие семьи и школы: актуальные стратегии и формы: https://adu.by/images/2021/01/Katovich-vzaimod-semii-shkoly.pdf
10. Катович, Н. К. Формы и методы взаимодействия семьи и школы: пособие для педагогов учреждений общ. сред. образования / Н. К. Катович, Т. П. Елисеева. – Минск : Национальный институт образования, 2011., стр.20-22

11. Нуриева А.Р., Миннуллина Р. Ф., Газизова Ф. С. Взаимодействие учителей и родителей в воспитании младших школьников Текст научной статьи по специальности «Науки об образовании», 2019., с.192.
12. Прокопьева Ю.П., Неустроева Е.Н. Совместная работа семьи и школы в воспитании ребенка. // Концепт, 2017. – Т 26. – стр. 255-256
13. Цацыбин, СТР. А. Взаимодействие школы и семьи / СТР. А. Цацыбин. – Волгоград : Учитель, 2004., стр. 19